ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «15» հունվարի 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03- Լ/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 41-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն և նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշումներով և 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N1269-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ԱԻ և ՔՊ) հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1) Սամվել Հարությունյան - Քաղաքացիական պաշտպանության պետ, հանձնաժողովի նախագահ.

2) Լևոն Մարդոյան - ՔՊ շտաբի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ.

3) Վարդան Սահակյան - տարահանման հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի նախագահի տեղակալ.

4) Ռազմիկ Գրիգորյան - ԱԻ և ՔՊ պատասխանատու, հանձնաժողովի անդամ.

5) Յուրի Պետրոսյան - կապի և ազդարարման ապահովման կազմավորման հրամանատար, հանձնաժողովի անդամ.

6) Հակոբ Սարգսյան - հասարակական կարգի պահպանման կազմավորման հրամանատար, հանձնաժողովի անդամ.

7) Տիգրան Գալստյան - նյութատեխնիկական ապահովման կազմավորման հրամանատար, հանձնաժողովի անդամ.

8) Հարություն Սարգսյան - փրկարարական և վթարավերականգնողական կազմավորման հրամանատար, հանձնաժողովի անդամ.

9) Կարեն Ղարիբյան - ՊԿԿ նախապատրաստման օպերատիվ կազմավորման հրամանատար, հանձնաժողովի անդամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 41-Ա/Ք հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ